ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 7. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց հավելավճարները և դրանց ~~Պետական պաշտոն զբաղեցնող անձանց հավելավճարները և դրանց~~ հաշվարկման կարգը**

…

4. Կոչման համար հավելավճարը տրվում է հարկադիր կատարողներին, դատական կարգադրիչներին հարկային, մաքսային, հատուկ քննչական ծառայութ ծառայողներին, քննչական կոմիտեի ծառայողներին, ընդ որում, հարկային և մաքսային ծառայողներին հավելավճարը տրվում է միայն առավել բարձր հավելավճար նախատեսող կոչման համար, իսկ նույն չափով հավելավճար նախատեսող կոչումների համա հավելավճարը տրվում է այդ կոչումներից միայն մեկի համար: Տվյալ մարմնում ամենացածր կոչման համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 3 տոկոսի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր կոչմա համար հավելավճարի չափը աճում է մեկ տոկոսով: